

հասարակութեան: Եթէ կիներն երեսփոխանական ժողով մ'ունենային՝ սովորական հագուստով պարահանդէս գացող կիներուն պարսաւանաց քուէ կու տային. եթէ նախարարութիւն մ'ունենային՝ նախարարութենէ վար կ'առնէին այդ՝ կուրծքը եւ թելերը ծածկուած կիներն, անվստահութեան քուէ տալով անոնց եւ իբրեւ վնասակար քաղաքականութեան հետեւող ամբաստանելով զանոնք: – Արդ, այս կիներն կորոշէ, որ ջղային հիւանդութիւն ունենայ. իւր որոշումը կգործադրէ, բժիշկը կու գայ եւ դեղագրին մէջ պարահանդէսի շրջագգեստ մը գրելով կմեկնի:

Ահա, բարեկամներ, կիներու ջղային հիւանդութիւնը, զոր բուժելու համար կ'ամ կօշիկ, կ'ամ գլխարկ, կ'ամ շրջագգեստ եւ կ'ամ վերջապէս հագուստ մը պէտք է: Կրնայի բիրաւոր դէպքեր պատմել այս հիւանդութեան վերաբերեալ, բայց գլխու ցաւ չպատճառելու համար այս չափով կշատանամ:

Ե՞րբ պիտի հրաժարիք այս պճնասիրութենէ, ո՛վ կիներ: Աստուած, կ'ըսէ Ս. Գիրքը, կիներ մարդու կողէն հանեց. այո՛, բայց նորաձեւութիւնն ալ զայն մարդուն գլուխը դրաւ:

2 Հոկտեմբեր

Միայն կիները չեն, որ միշտ նոր ձեւով հագուիլ կ'ուզեն. հրապարակի վրայ ալ կը գտնուին քննադատներ, որ նոր ձեւով խօսիլ կ'ուզեն:

Կը ներկայացնեն ձեզ պ. Գրասէր Ատոմն, որ Մասիսի մէջ նոր կ'ամ հին հրատարակութիւններ քննադատելու պաշտօն կը վարէ: Ճաշակը կիրթ է, եւ քննադատի մը հարկ եղած դրամագլուխն ունի. բայց շատ անգամ գիրք մը քննադատած միջոցին կսկսի իւր ցաւերը մեզի պատմել: Երբեմն ալ ինքը խօսած ատեն՝ Լիթրէն ալ խօսքի մէջ կնետուի: Սա խօսքը չլմնցուցած՝ Վիքթոր Հիւկօ, Վօլթեր, Լամարթին եւ ուրիշ հարիւրաւոր հեղինակներ կու գան, խօսքին մէջ կխառնուին, այնպէս որ ընթերցողն կստիպուի ըսել:

–Կ'ամ ամենքդ ալ լռեցէ՛ք, կ'ամ մեկիկ մեկիկ խօսեցէ՛ք, որ հասկանաք:

Քանի՛ – քանի անգամներ ըսած եմ պ. Գրասէր Ատոմին. «Պ. Ատոմ, թող տուր սա մարդերուն օձիքն եւ դու խօսելիքդ ըսէ»:

Օրինակի համար, ես կ'ըսեմ.

«Արշալոյսին արթնացայ, հագուստներս հագայ եւ քիչ մը հաց կերայ:

Տուր այս տողը պ. Ատոմին եւ հետեւեալ օրը քեզի պիտի ըսէ.